ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
**2022-2023**
Հայոց լեզու (7-րդ դասարան)

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Անուն Ազգանուն ______________________________

Դպրոց ______________________________

Դասարան __________ Խումբ __________

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

Կարդա՛ առակը:

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Մինչ սոխակի աղվամազիկ ձագերը, միմյանց սեղմված և իրար գրկած, անխռով քնած էին, նրանց հոգածու ծնողները թռան գնացին կեր հայթայթելու: Այդ տեսնելով՝ իժն զգուշորեն իր թաքստոցից դուրս սողաց դեպի թռչնակների բույնը՝ մտովի նաշակելով դյուրին ձեռք գցած ավարը:

Բայց մայր սոխակն արդեն տուն էր շտապում՝ որդը կտուցին: Ճիշտ ժամանակին նկատելով չարագործին՝ մայրը սրտապատառ ծղրտաց.

– Կա՛նգ առ, գթա՛ իմ անմեղ ձագուկներին: Փոխարենը ես քեզ համար ախորժալուր և սրտառուչ մի երգ կերգեմ, որի նմանը երբևէ լսած չես լինի...

Եվ նա գեղգեղաց քաղցրակարկաչ, դայլայլեց ու սուլեց: Անտառով մեկ տարածվեցին քնքուշ ու կախարդիչ դայլայլի ելևէջները...

**1.** Մեկ նախադասությամբ ավարտի՛ր առակը (**1** միավոր):

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

**2.** Վերնագրի՛ր առակը, բացատրի՛ր, թե ինչո՛ւ ես այդ վերնագիրն առաջարկում

**(2** միավոր**):**

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

3. Տեքստում գտի՛ր և տրված բառերի կողքին գրի՛ր համապատասխան հոմանիշները **(2** միավոր):

Ճարել----------------------------------------------------

Ըմբոշխնել------------------------------------------------

Աղեկտուր-------------------------------------------------

Հոգեհմա--------------------------------------------------

**4.** Տեքստի ո՞ր բառերն են հականիշ տրվածներին**,** գտի՛ր և գրի՛ր համապատասխան բառի կողքին **(2** միավոր**):**

Վրդովված------------------------------------------------

Խրթին---------------------------------------------------

Բարյացակամ----------------------------------------------

Կոպիտ---------------------------------------------------

**5.** Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան բառերը

**(2** միավոր**):**

Արմատ+ածանց+ածանց-------------------------------------

Արմատ+ա+արմատ+ածանց-----------------------------------

Արմատ+արմատ+ածանց----- --------------------------------

Արմատ+շաղկապ+արմատ------------------------------------

**6.** Տեքստում գտի՛ր թիռ, ծին, առ, է արմատն ունեցող բառերը, դո՛ւրս գրիր, ընդգծի՛ր համապատասխան արմատը **(2** միավոր**)**։

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

__________________________________

**7.** Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր դերբայները, նշի՛ր դրանց անունները **(4** միավոր**)**։

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

__________________________________

**8.** Պատկերացրո՛ւ, որ այս առակի օձը կարողանում է մարդկային լեզվով խոսել։ Գրի՛ր նրա մենախոսությունը տեքստում նկարագրված դեպքի առիթով **(5** միավոր**)**։

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

----------------------------------------------------------------

---------------